

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2017 թվականի մայիսի 25-ի N570-Ն որոշման մեջ
լրացումներ և փոփոխություններ կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2023 թվականի N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 25-Ի N570-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի «Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N570-Ն որոշման N1 հավելվածում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) 5-րդ կետում՝

ա. «հարկային հաշվարկների» բառերից հետո լրացնել «, հաշվարկային փաստաթղթերի տվյալների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով այլ տեղեկությունների» բառերը,

բ. հանել «ըստ հարկային հաշվարկների» բառերը,

2) 7-րդ կետից հանել «ներկայացրած հարկային հաշվարկների» բառերը,

3) 8-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) յուրաքանչյուր հարկ վճարող պետք է ունենա իր գործունեության տեսակին, կատարված գործարքներին և հարկման ռեժիմին բնորոշ և կիրառելի ռիսկային չափանիշներ.»,

4) 9-րդ կետից հանել «կենտրոնական» բառը,

5) 11-րդ կետում լրացնել 20-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20) արհեստական բանականության և մեքենայացված ուսուցման գործիքների կիրառմամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազայի վերլուծության արդյունքում արտասովոր (անոմալ) գնահատված ցուցանիշները:»,

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետ՝

«12.1. Սույն բաժնի դրույթները չեն տարածվում 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշի վրա:»,

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին կետ՝

«16.1. Սույն բաժնի դրույթները չեն տարածվում 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշի վրա:»,

8) IX-րդ բաժնի վերնագրում «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ» բառերը փոխարինել «ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ» բառերով,

9) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17) Հարկ վճարողների ռիսկայնության միավորը հաշվարկվում է որպես առանձին չափանիշների ռիսկային միավորների հանրագումար, որը հարկային մարմնի սահմանած կարգով կարող է փոփոխվել 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշով գնահատման արդյունքների հիման վրա:»,

10) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«18. Գնահատված ռիսկային միավորները, ինչպես նաև 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշով գնահատման արդյունքները պահվում են հարկային մարմնի տվյալների բազայում:»,

11) ուժը կորցրած ճանաչել 19-23-րդ կետերը,

12) X-րդ բաժնի վերնագրում «ԳՆԱՀԱՏՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ» բառերը փոխարինել «ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ» բառերով,

12) 25-րդ կետում «Ըստ հաշվարկների՝ բարձր» բառերը փոխարինել «Բարձր» բառով,

13) 26-րդ կետում «, ինչպես նաև հարկային մարմնի հետ հորիզոնական մոնիթորինգի համաձայնագիր կնքած կազմակերպությունները,

համաձայնագրի գործողության ժամանակահատվածում,» բառերը փոխարինել «հարկ վճարողները,» բառերով,

14) 29-րդ կետի`

ա. 1-ին ենթակետից հանել «, այդ թվում` նաև ըստ հարկ վճարողների հաշվառման հարկային տեսչությունների» բառերը,

բ. 2-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«2) 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշով գնահատման արդյունքների հիման վրա ռիսկային միավորների հանրագումարի փոփոխությունների իրականացումը.»,

գ. 3-րդ ենթակետից հանել «ըստ հարկային հաշվարկների սահմանված համամասնության և ըստ որոշված» և «թվի` հարկ վճարողների» բառերը,

15) 30-րդ կետից հանել «կենտրոնական» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: